ԱՅՍ ՁԱՏԻԿԻՆ ՃԱՇԱԿԻՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Գաղատացիս 5:7, Կողոսացիս 1:14

«Քրիստոս ազատեց մեզ իր արյունովը.» Կողոսացիս 1:14

Ինչի՞ց կարող է ազատել Հիսուսը

1- Անցյալիս մեղքի զգացումներից

«Որով ունենք փրկությունը նրա արյունովը՝ մեղքերի թողությունը իր շնորհքի մեծության չափովը:» Եփեսացիս 1:7

«Եվ ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաններովը որ մեզ հակառակ էր, և նրան վեր առավ մեջտեղիցը և խաչափայտին վրա բևեռեց.» Կողոսացիս 2:14

«Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս քրիստոսումը լինողների համար.» Հռովմայեցիս 8:1

2- Ապագայի վերաբերյալ ունեցած մտահոգություններից

«Հոր Աստծո կանխագիտության պես, Հոգու սրբությունովը, հնազանդության և Հիսուս քրիստոսի արյունին սրսկելու համար. շնորհք և խաղաղություն շատանա ձեզ վրա:» Ա Պետրոս 1:2

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով:» Փիլիպ 4:13

3- Աննպատակ ներկայից

«Վասնզի նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար. որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք:» Եփես 2:10

«Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատվական չեմ համարում՝ որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը, և այն պաշտոնը որ Տեր Հիսուսից առա...» Գործք Առաքելոց 20:24

4- Իմ ջանքերով երկինք գնալուց

«Արդ եթե Քրիստոսի հետ մեռանք այս աշխարհքի սկզբունքներիցը՝ էլ ինչո՞ւ եք այս աշխարհքի մեջ կենդանիների պես այսպիսի կանոններով ապրում.» Կողոսացիս 2:20

«Բայց նրան՝ որ գործք է անում, վարձքը չի համարվում շնորհքի պես, այլ պարտքի պես:» Հռովմայեցիս 4:4

«Աստծո շնորհքը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռովը:» Հռովմայեցիս 6:23

Աղոթք, որ առաջնորդում է դեպի ազատության

Ով Տեր, հավատում եմ,

որ Հիսուսը ինչպես որ ինքն ասաց, Քո որդին է և

ապացուցեց այդ մեռելներից հարություն առնելով:

Ով Հիսուս, շնորհակալ եմ, որ խաչի վրա մեռար ինձ

համար:

Ես ուզում եմ ճանաչել քեզ անձնապես և ճաշակել այն

ազատությունը որ Դու ես առաջարկում:

Եվ խնդրում եմ Քեզ, որ գաս իմ կյանքի մեջ

և դառնաս իմ Տերն ու փրկիչը:

Ես ընդունում եմ Քո բերած ձրի փրկության պարգևը:

Ամեն:

Հաջորդ Կիրակի:

Ընտանիքի Կարևորությունը

Հովիվ Սարո Խաչիկեան